ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-20/2-Ֆ

ք. Վանաձոր «14»փետրվարի 2020թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար՝ Մ.Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ֆանտաստիկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հարությունյանի,որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 556 482 /հինգ միլիոն հինգ հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է _11_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Լոռու մարզ Վանաձորի համայնքապետարան	„Ֆանտաստիկ„ՍՊԸ
ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք	ք.Վանաձոր Տիգրան մեծի 38/1
ՀՎՀՀ՝	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 16093015357400
Հ/Հ՝ /լրացնել/	ՀՎՀՀ 06946424
Համայնքի ղեկավար	
----------Մ. Ասլանյան	Տնօրեն ..... Ա.Հարությունյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
« 14 »փետրվարի 2020 թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-20/2-Ֆ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ապրանքի								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	30234640/504	Հիշողության կրիչ 1	King Sou LTD	USB Flash կափարիչով Հիշողության ծավալը՝ 16qB Ինտերֆեյսը՝ USB 3.0, 3.1: Տեղեկատվության փոխանցման արագությունը նվազագունը 5 Գբիտ/վ, գործարանային փաթեթավորմամբ: <Kinqston HyperX Fury 16qB> կամ համարժեք	հատ	2900	52200	18	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22 և ք. Վանաձոր Նժդեհի14 , Վանաձորի ՍԱՎՏԲ	18	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան
2	30192133/503	Սրիչ	Yalong Stationery Co., Ltd	Մատիտ սրելու համար, երկանցք, երկաթյա իրանով և լեզվակով: <Moped> կամ համարժեք	հատ	65	2600	40		40	
3	44521230/502	Ամրակ1	Yalong Stationery Co., Ltd	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, գունավոր վինիլային ծածկույթով, 33 մմ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար: Պլաստմասե թափանցիկ տուփով: Տուփի մեջ 100 հատ:	հատ	0.84	8400	10000		10000	
4	44521230/503	Ամրակ2	Yalong Stationery Co., Ltd	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական ոսկեգույն ծածկույթով, 50 մմ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար: Պլաստմասե թափանցիկ տուփով: Տուփի մեջ 100 հատ:	հատ	1.45	52200	36000		36000	
5	30192128/501	Գրիչ 1	Yalong	Գրիչ գելային սեղանին ամրացնելու	հատ	139	39615	285		285	

			Stationery Co., Ltd	հարմարանքով՝ զսպանակով, թափանցիկ իրանով:							ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2020:
6	30192121/505	Գրիչ 2	Cello LTD	Գրիչ ռոլլեր, գնդիկը-կարբիդ, վոլֆրամ, տրամագիծը 0,7մմ, կորպուսը պլաստիկ, անվտանգ ծայրադիր, գույնը սեւ, կանաչ, կարմիր "Uni Ball Boxy fine" կամ համարժեք	հատ	290	13920	48		48	
7	30192121/507	Գրիչ 3	Cello LTD	Գրիչ գնդիկավոր՝ կափարիչով, ռետինե բռնակով: Պլաստմասե կապույտ, սև կամ կարմիր գույների	հատ	27.50	11000	400		400	
9	39263600/501	Գրչաման	Yalong Stationery Co., Ltd	Կանաչ և սպիտակ գույների գրչաման պլաստմասե, 360⁰պտտվող իր առանցքի շուրջը, 3-ից ոչ պակաս բացվող հատվածով՝ նախատեսված ամրակների , կոճգամների տեղադրման համար:	հատ	520	7800	15		15	
10	39263200/501	Գրառումների գիրք 1	Guangbo LTD	Գիրք,A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչ պակաս քան 85%, խտությունը 65-70գ/ք.մ.ն կողմնային մասում նշված էջերի քանակը 150 թերթ(3QR), կոշտ կապույտ կազմով: <FIS, Guangbo> կամ համարժեք	հատ	1000	80000	80		80	
11	39263200/502	Գրառումների գիրք 2	Guangbo LTD	Գիրք,A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչ պակաս քան 85%, խտությունը 65-70գ/ք.մ.ն կողմնային մասում նշված էջերի քանակը 200 թերթ(4QR), կոշտ կապույտ կազմով: <FIS, Guangbo> կամ համարժեք	հատ	1300	49400	38		38	
12	30197333/501	Դակիչ1	OOO<Стамм>	Դակիչ մետաղական իրանով, 4 անցքի հնարավորությամբ, մինչև 30 թերթ դակելու համար, շարժական քանոնով : < KW-Trio 964> կամ համարժեք:	հատ	1400	12600	9		9	
13	30197332/502	Դակիչ 2	OOO<Стамм>	Դակիչ մետաղական իրանով, նախատեսված մինչև 60թ դակելու համար, շարժական քանոնով, անցքերի հեռավորությունը 6 սմ: <Maped Essentials> կամ համարժեք:	հատ	3800	30400	8		8	
14	39241141/503	Դանակ 1	Yalong Stationery Co., Ltd	Դանակ գրասենյակային, սայրի լայնությունը 18մմ,պատյանը երկաթից: ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով 'Dolphin' կամ համարժեք:	հատ	130	3900	30		30	
15	39241141/504	Դանակ 2	Yalong	Դանակ գրասենյակային, 9մմ x 80մմ,	հատ	90	1800	20		20	

			Stationery Co., Ltd	պատյանը մետաղյա՝ ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով, սայրը ֆիքսող երկաթե պտուտակով, ծայրոցը մետաղական,գույնը սև:							
16	42961280/501	Դիսպենսեր	Yalong Stationery Co., Ltd	Տակդիր նախատեսված 36մմ լայնությամբ սկոչի համար:	հատ	300	4500	15		15	
17	30192720/501	Ընդգծիչ 1	Yalong Stationery Co., Ltd	Ընդգծիչ (մարկեր), ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված, շեղ-տափակ ծայրով, տուփում 6 գույն: Flamingo կամ համարժեք:	հատ	80	14400	180		180	
18	30192720/502	Ընդգծիչ 2	Yalong Stationery Co., Ltd	Տեքստընդգծիչ (մարկեր), գելային, ոսկային հիմքով, ֆլյուրիսցենտ գույների, առանց հոտի: Չի թափանցում թղթի միջով, միջուկը դուրս է բերվում մեխանիակական շարժման միջոցով: GEL HIGHLIGHTER <Moped>, <Hatber> կամ համարժեք:	հատ	155	17050	110		110	
20	30192741/501	Գունավոր տպագրության թուղթ1	Xuango LTD	A4 ֆորմատի, տեսակը սուպերգլյանց, լազերային տպագրության համար,միակողմանի փայլուն, խտությունը 250գ/մ2, տուփի մեջ 100 հատ, գույնը սպիտակ, չափսը 210x297մմ, լազերային տպիչներրով տպագրության համար, Colotech Color Laser Paper կամ համարժեք	կգ	2400	14880	6.2		6.2	
21	30192741/502	Գունավոր տպագրության թուղթ2	Xuango LTD	Երկկողմանի շիթային տպագրության ունիվերսալ թուղթ, <LOMOND> մակնիշի կամ համարժեք, երկողմնի փայլով, 280գ/մ2, 210*297մմ, տուփում 100 թերթ:	կգ	2400	16800	7		7	
22	30197622/503	Թուղթ 1	Jojo LTD	A4 չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80գ/մ2, A4 (210×297)մմ: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, պետք է համապատասխանի ISO 9001, 14001, OHSAS 18001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին, խտությունը՝ համաձայն ISO 536 80գր/մ2,	կգ	565.37	3112365	5505		5505	

				պայծառությունը՝ առնվազն 105%, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 առնվազն 168CIE%, հաստությունը՝ համաձայն ISO 534 առնվազն 104Մկմ, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 առնվազն 93%, անհարթությունը՝ 220 մլ/րոպեից ոչ ավել, խոնավությունը՝ 3,5-4,5%,օդի անցանելիությունը՝ 1700մլն/րոպե, տոկսիկ թունավորությունը նորմայի սահմաններում ոչ ավել 95,3%, ֆենոլ ոչ ավել 0,0001մգ/մ3, ֆորմալդեգիդ ոչ ավել 0,0014մգ/մ3: A, կամ A+ դասի երկկողմանի տպագրությունից կամ պատճենումից հետո թղթի եզրների կորությունը չի թույլատրվում, հետո անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստիացնող նամակ-գրություն պատվիրատուին: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր Certificate of origin: <Pioneer>, <DoubleA> կամ համարժեք							
23	30197622/502	Թուղթ 2	International Paper Company	A4 չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80գ/մ2, A3 չափի (297×420)մմ: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, պետք է համապատասխանի ISO 9001, 14001, OHSAS 18001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին, խտությունը՝ համաձայն ISO 536 80գր/մ2, պայծառությունը՝ առնվազն 105%, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 առնվազն 168CIE%, հաստությունը՝ համաձայն ISO 534 առնվազն 104Մկմ, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 առնվազն 93%, անհարթությունը՝ 220 մլ/րոպե-ից ոչ ավել, խոնավությունը՝ 3,5-4,5%,օդի անցանելիությունը՝	կգ	573	120330	210			210	

				1700մլն/բոպե, տոկսիկ թունավորությունը նորմայի սահմաններում ոչ ավել 95,3%, ֆենոլ ոչ ավել 0,0001մգ/մ3, ֆորմալդեգիդ ոչ ավել 0,0014մգ/մ3: A, կամ A+ դասի երկկողմանի տպագրությունից կամ պատճենումից հետո թղթի եզրների կորությունը չի թույլատրվում, հետո անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ մասնագրերը արտադրողի կողմից հավաստիացնող նամակ-գրություն պատվիրատուին: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի օրիգինալության հավաստագիր Certificate of origin: <Pioneer>, <DoubleA> կամ համարժեք							
24	30199130/502	Թուղթ 3	International Paper	Կալկա թուղթ (մոմաթուղթ-մատրիցա):Խտությունը 41գ/քառ.մ, թափանցիկությունը 45%, սեփական խոնավությունը 6%: Պատրաստված գլանափաթեթներով: Գլանափաթեթի չափերը 41մ, լայնությունը 878մմ:ԳՕՍՏ 892-89: 'PAPERLINE' կամ համարժեք:	կգ	1500	8850	5.9			5.9
25	30194320/502	Թուղթ 4	Госзнак НПО	Թուղթ գծագրական (վատման):Թուղթ A մակնիշի (մատիտով, տուշով և ջրաներկով գծագրաֆիկական աշխատանք կատարելու համար), 1մ2 մակերեսով թղթի զանվածը՝ 180գ, լիստերով Չափը 700մմ*1000մմ: Տուփում 100h	կգ	580	73080	126			126
26	30197623/503	Թուղթ 5	Госзнак НПО	Թուղթ միլիմետրովկա,A3 ֆորմատի: Չափերը՝ 297X420մմ :Տուփի մեջ 50 հատ: <PAPERLINE> կամ համարժեք	կգ	1800	7200	4			4
27	30197623/504	Թուղթ 6	<PAPERLINE> LTD	Թուղթ միլիմետրովկա A2 ֆորմատի: Չափերը 420×594: Տուփի մեջ 50 հատ: <PAPERLINE> կամ համարժեք	կգ	2500	12500	5			5
28	30197230/512	Թղթապանակ 1	<PAPERLINE> LTD	Թղթապանակ՝ կավճած ստվարաթղթից, A4 չափի փաստաթղթերի համար, թելակապերով: Խտությունը՝ 300գ/ք.մ:	հատ	42	25200	600			600
29	30197232/502	Թղթապանակ 2	ԿՌՈՒՆԿ ՍՊԸ	Արագակար՝ կավճած ստվարաթղթից, A4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական հարմարանքով: Խտությունը՝ 280գ/ք.մ:	հատ	40	32000	800			800

30	22851100/501	Թղթապանակ 3	ԿՌՈՒՆ Կ ՍՊԸ	Արագակար՝ պլաստիկ, ներսից գրպանով հաստությունը ոչ պակաս 200մկ A4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական զսպանակով: 'Atlas' կամ համարժեք:	հատ	85	25500	300		300	
31	22851200/509	Թղթապանակ 4	Yalong Stationery Co., Ltd	Թղթապանակ երկու կոճզամով, A4 ֆորմատի, անթափանց տարբեր գույների, հաստ պոլիպրոպիլենից (հաստությունը նվազագույնը 250մկ) պատրաստված, երեսին անվանաքարտի տեղով: 'Attache Selection' կամ համարժեք:	հատ	199	79600	400		400	
32	22851200/510	Թղթապանակ 5	Ghinhu LTD	Թղթապանակ կոճակով, A4 ֆորմատի, անթափանց տարբեր գույների: 'My CLEAR BAG' կամ համարժեք:	հատ	45	9000	200		200	
33	22851200/502	Թղթապանակ 6	Yalong Stationery Co., Ltd	Պլաստիկ թղթապանակ ռետինե երիզներով, A4 ֆորմատի, ներքին գրպանիկներով, թղթապանակի հաստությունը 30մմ: Սև գույնի: 'FOLDER MATE' կամ համարժեք:	հատ	499	47405	95		95	
34	22851200/503	Թղթապանակ 7	ООО<Стамм>	Թղթապանակ պլաստիկ բռնակով, ներքին 6 բաժանումով, փականով, լայնությունը՝ 40 մմ, A4 ֆորմատի: 'Cool Gray' կամ համարժեք:	հատ	749	67410	90		90	
35	22851200/501	Թղթապանակ 8	Ghinhu LTD	Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 100 թափանցիկ հաստ ֆայլերով:	հատ	590	47200	80		80	
36	22851200/504	Թղթապանակ 9	Ghinhu LTD	Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, կազմի հաստությունը ոչ պակաս 450 մկ, 40 թափանցիկ հաստ ֆայլերով, կանաչ: 'Dolphin' կամ համարժեք:	հատ	270	21600	80		80	
37	22851200/506	Թղթապանակ 10	Савтрей Плюс ООО	Ստվարաթուղթ 1000 գր. մ² Չափը՝ 32,5 սմ x 23սմ , պատված սպիտակ օֆսեթ թղթով, թղթապանակի հաստությունը՝ 4.8 սմ, թղթապանակի ստվարաթղթերը ամրացված են իրար բունվիլինով (սպիտակ գույնի), բունվիլինի լայնությունը՝ 12 սմ, թղտապանակը վերևից , ներքևից և կողքից ունի կապիչներ թվով 6 հատ (ամեն կողմից 3 ական հատ): Հնարավոր է տեղադրել մինչև 450 հատ թուղթ:	հատ	890	97900	110		110	

38	22851200/507	Թղթապանակ 11	Зинтавр ООО	Թղթապանակ կաշվեպատ ՀՀ ազգային զինանիշով, փաստաթղթերի ստորագրման համար, սպունգային կազմով, A4 ֆորմատի:	հատ	1790	35800	20			20
39	22851200/508	Թղթապանակ 12	Yalong Stationery Co., Ltd	Թղթապանակ ուղղահայաց և հորիզոնական զսպանակով, A4 ֆորմատ, չափը 210×297մմ: Կողային լայնությունը 33 մմ, կազմի հաստությունը 800 մկմ: 'Dark Blue' կամ համարժեք:	հատ	375	20625	55			55
40	22851200/505	Թղթապանակ 13	Yalong Stationery Co., Ltd	Թղթապանակ պլաստիկ, երկօղականի թափանցիկ, եզրերը պատված 10 մմ լայնությամբ սև ժապավենով A4 ֆորմատի, հաստությունը 25 մմ, տարբեր գույների: 'Foldermate' կամ համարժեք:	հատ	690	55200	80			80
44	35821400/504	ՀՀ ազգային դրոշ 2	ՀՀ դրոշ	Դրոշի 3 եզրերը պետք է եզրավորված լինեն ոսկեփայլ երիզներով: Համաձայն <<ՀՀ դրոշի և ՀՀ զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 888-Ն որոշման:ՀՀ դրոշը պատրաստված բամբակյա կամ մետաքսե •որձվածքից, չափսը՝ 12x22սմ: Դրոշի վրա չպետք է լինեն անցքեր, պատռվածքներ, հյուսվածքի խոտան՝ 0,5 սմ-ից ավելի: Մետաղյա պոչով, օքսիդիանի կամ փայտե ամրացման հարմարանքով: ՀՍ 50-94	հատ	2500	10000	4			4
46	39263100/506	Լրակազմ 2	Cosmic LTD	Սեղանի կոմպլեկտ , մոխրագույն պլաստիկից, 18 առարկա՝ 2 գրիչ, 4 մատիտ, սրիչ, ռետին, մկրատ, քանոն, ամրակ (20), կոճգամ (10), սրիչ, կարիչ, կարիչի ասեղ, դանակ գրասենյակային, նոթատետր, սքոչի դիսպենսեր, սքոչ: 'PMP' կամ համարժեք:	հատ	2450	24500	10			10
47	39263100/504	Լրակազմ 3	Cosmic LTD	Սեղանի մետաղական հավաքածու 6 առարկա սև գույնի 1.լրակազմ գրապիտույքների համար 2.թղթերի և նամակների հորիզանական թղթադարան 3 բաժանմունքով 3.նշումների թղթի տակդիր 10*10սմ չափի; 4սեղանի օրացույցի տակդիր. 5 կոճգամների, ամրակաների երկտեղանոց աման.	հատ	4000	40000	10			10

				6.թղթերի և նամակների ուղղահայց թղթադարան 4 բաժանմունքով							
48	30199230/503	Ծրար 1	ОАО "Ряжская Печатная фабрика"	Փոստային ծրար, պատուհանով: Ըստ երեսի կողմի ձևավորման մականշվածքներով,թղթի սպիտակությունը 90%,խտությունը 80գ/մ2, առանց գրությունների, ինքնասոսնձվող, 114 x 165մմ (բացիկների համար) : 'Jaya' կամ համարժեք:	հատ	6.80	20400	3000		3000	
49	30199230/502	Ծրար 2	ОАО "Ряжская Печатная фабрика"	Փոստային ծրար, թղթի սպիտակությունը 90%,խտությունը 80գ/մ2, առանց գրությունների,պատուհանով, ինքնասոսնձվող, C5 (162 × 229մմ): 'Jaya' կամ համարժեք:	հատ	14	217700	15550		15550	
50	30199232/501	Ծրար 3	ОАО "Ряжская Печатная фабрика"	Փոստային ծրար, թղթի սպիտակությունը 90%,խտությունը 100գ/մ2, A4 ֆորմատի թղթերի համար, ինքնասոսնձվող, անթափանց, նախաեսված գաղտնիություն պարունակող գրությունների առաքման համար: Չափսերը՝ 210x297մմ :	հատ	24	30000	1250		1250	
51	30197322/503	Կարիչ 1	Deli LTD	Փոքր, կարիչ գրասենյակային՝ 20 էջ կարելու համար: Բռնակը պլաստիկ, սեղման հատվածը ռետինե: Օգտագործվող ասեղների քանակը՝ 50, ասեղի համարը՝N10: <Kw-Trio 65330> կամ համարժեք:	հատ	300	10500	35		35	
53	30197322/502	Կարիչ 3	Kangaro LTD	Կարիչ կազմարարական՝ 41 էջ կարելու համար, ասեղներ No26/6 և 24/6, ծակման խորությունը 317մմ, օգտագործվող ասեղների քանակը 200: Սև գույնի: <Kangaro DS-435L> կամ համարժեք:	հատ	3000	15000	5		5	
54	30197323/503	Կարիչ 4	Kangaro LTD	Մեծ, կարիչ գրասենյակային ՝ 210 թերթ կարելու համար:Կարելու խորությունը նվազագույնը 6սմ: Օգտագործվող ասեղների քանակը՝100,ասեղի համարը՝23/8, 23/10, 23/13, 23/15: <Attache Selection Terminator> կամ համարժեք	հատ	5500	11000	2		2	
55	30197111/502	Կարիչի ասեղ 1	Deli LTD	Փոքր ասեղ, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 10մմ/6մմ: Տուփի մեջ 1000 հատ: 'Kangaro' կամ համարժեք:	տուփ	52	4160	80		80	

56	30197112/502	Կարիչի ասեղ 2	Deli LTD	Միջին, ասեղ գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 24մմ/6մմ : Տուփի մեջ 1000 հատ : 'Kangaro' կամ համարժեք:	տուփ	60	8460	141		141	
57	30197100/503	Կարիչի ասեղ 3	Deli LTD	Մեծ ասեղ, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 23մմ/23մմ: Տուփի մեջ 1000 հատ: 'Kangaro' կամ համարժեք:	տուփ	350	15400	44		44	
58	30197100/504	Կարիչի ասեղ 4	Deli LTD	Մեծ ասեղ, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 23մմ/20մմ: Տուփի մեջ 1000 հատ: 'KW-trio' կամ համարժեք:	տուփ	350	5950	17		17	
59	30197120/503	Կոճգամ 1	Xingu LTD	Կոճգամ մետաղական: Պլաստիկ տուփի մեջ 100 հատ:	տուփ	90	1080	12		12	
60	30197120/504	Կոճգամ 2	Xingu LTD	Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով,տարբեր գույների: Տուփի մեջ 100 հատ:	տուփ	140	6440	46		46	
61	30192155/501	Կնիքի սարք	Colop	Կնիքի սարք փոքր, կլոր տրամագիծը 50մմ : 'Colop printer R 50' կամ համարժեք:	հատ	3000	3000	1		1	
62	30141200/505	Հաշվիչ մեքենա 1	Shenzhen Dolink Industrial Co., Ltd	Հաշվիչ սեղանի , 14 նիշ,միջին չափի, սնուցման 2 աղբյուր, շարժական վահանակով, գործողությունները վահանակի վրա ցուցադրելու հնարավորությամբ, ինքնալիցքավորվող: Չափսերը 140x145x22մմ <citizen SDC344II> կամ համարժեք:	հատ	2500	20000	8		8	
63	30192130/505	Մատիտ 1	FIS LTD	Գծագրական մատիտների հավաքածու առանց ռետինի: Մետաղական տուփով (4H-5B) կարծրության մատիտներ: Տուփում 12h <Bruynzeel>,' Faber-Castell ' կամ համարժեք:	հատ	80	12480	156		156	
64	30192130/506	Մատիտ 2	FIS LTD	Մատիտ 5B, սրած, ռետինե ջնջոցով:' Faber-Castell ' կամ համարժեք:	հատ	80	10400	130		130	
65	30192130/507	Մատիտ 3	Flamingo LTD	Մեխանիկական մատիտներ, մետաղյա իրանով, ըստ գրիֆելի դուրս հրման մեխանիզմի,գրիֆելի տրամագիծը 0.5մմ: Նախատեսված հատուկ մասնագիտական գծագրական աշխատանքների համար <Rotring>, < Faber-Castell> կամ համարժեք	հատ	280	5600	20		20	

66	30192130/508	Մատիտ 4	Flamingo LTD	Մեխանիկական մատիտներ, երկաթյա իրանով, ըստ գրիֆելի դուրս հրման մեխանիզմի,գրիֆելի տրամագիծը 2մմ: Նախատեսված հատուկ մասնագիտական գծագրական աշխատանքների համար <Rotring>, < Faber-Castell> կամ համարժեք	հատ	280	5600	20		20	
67	30192135/503	Միջուկ 1	Xingu LTD	Մատիտի միջուկ, 0,5մմ, 2B, երկարությունը 65մմ, 20հատ: Բարձր որակի 'Rotring' կամ համարժեք:	տուփ	100	1000	10		10	
68	30192135/504	Միջուկ 2	Xingu LTD	Մատիտի միջուկ, 2մմ, HB, երկարությունը 65մմ, 20հատ: Բարձր որակի 'Rotring' կամ համարժեք:	տուփ	150	1500	10		10	
69	39241210/505	Մկրատ 1	KWANG HSIEH ENTERP RISE CO., LTD.	Մկրատ ռետինե փափուկ բռնակներով, սայրը չժանգոտող մետաղից, մկրատի երկրությունը նվազագույնը 21 սմ, ֆիրմային փաթեթավորմամբ: "Kleiber" կամ համարժեք:	հատ	350	7000	20		20	
70	39241210/506	Մկրատ 2	KWANG HSIEH ENTERP RISE CO., LTD.	Մկրատ երկաթյա, բռնակները էրգոնոմիկ 22.8սմ երկարությամբ, չժանգոտող պողպատից: <Erich Krause "Ferro"> կամ համարժեք:	հատ	400	4000	10		10	
71	39241210/504	Մկրատ 3	KWANG HSIEH ENTERP RISE CO., LTD.	Մկրատ ռետինե փափուկ երկգույն բռնակներով, նախատեսված հաստ ստվարաթղթի կտրման համար, սայրը չժանգոտող մետաղից, մկրատի երկրությունը նվազագույնը 25 սմ, ֆիրմային փաթեթավորմամբ: "Durable-1774" կամ համարժեք:	հատ	450	4500	10		10	
72	22811150/505	Նոթատետր 1	Xuanshen co LTD	Կաշվեպատ հեռախոսային գրքույկ, ռուսերեն կամ հայերեն տառացանկով, A5 ֆորմատի, Նվազագույնը 192թ:	հատ	500	11000	22		22	
73	22811150/508	Նոթատետր 2	Libra LTD	Նոթատետր, A5 ֆորմատի, տողանի, 96 թերթ, վերևից պարույրով: 'SinAr' կամ համարժեք:	հատ	190	9500	50		50	
74	22811150/507	Նոթատետր 3	Manmar LTD	Նոթատետր A5 ֆորմատի հայերեն լեզվով, կաշվեպատ փափուկ կազմով, 2018 թվականի ամսաթվերով, պունակավորված թերթերով, թղթի տեսակը՝ սպիտակությունը ոչ պակաս քան 95 %, խտությունը 80 գր/մ2:	հատ	1500	58500	39		39	

				Նվազագույնը 192թ							
75	22811150/506	Նոթատետր 4	FIS LTD	Նոթատետր 2017 թ-ի , A4 ֆորմատի, կաշվեպատ փափուկ կազմով և մետաղական անկյուններով,այունակավորված թերթերով, թղթի տեսակը՝ սպիտակությունը ոչ պակաս քան 95 %, խտությունը 80գ/մ2: Նվազագույնը 192թ, կազմի ներսի հատվածում պատկերված է աշխարհի քաղաքական քարտեզը:<Fis> կամ համարժեք	հատ	2300	69000	30		30	
76	30199420/504	Նշումների թուղթ կպչուն 1	Xinghu LTD	Նշումների թուղթ ինքնասոսնձվող, 76մմ x 76մմ չափերի, 100 թերթ, դեղին գույնի: <Fantastick (EU)> կամ համարժեք:	հատ	98	9604	98		98	
77	30199420/505	Նշումների թուղթ կպչուն 2	Xinghu LTD	Նշումների թուղթ ինքնասոսնձվող,76մմ x 102մմ չափերի, 100 թերթ, դեղին գույնի: <Fantastick (EU)> կամ համարժեք:	հատ	140	14000	100		100	
80	30199430/506	Նշումների թուղթ 2	Jiaxing Liying Package Co., Ltd.	Պլաստիկ տուփով, սպիտակ,չափերը 9x9x9սմ, 870 թերթ <SINAR> կամ համարժեք:	հատ	790	31600	40		40	
82	30192111/501	Շտամպի բարձիկ	Horse LTD	Բարձիկ դրոշմակնիքի համար, իր տուփով՝ 6.5 x 8.5 սմ չափերի,/տարբեր գույների/: 'FIS' կամ համարժեք:	հատ	220	9240	42		42	
84	30192160/505	Ջնջիչ 1	Yalong Stationery Co., Ltd	Շտրիխ վրձինով՝ 20մլ: 'RETYPE' կամ համարժեք:	հատ	120	9600	80		80	
85	30192160/506	Ջնջիչ 2	Yalong Stationery Co., Ltd	Ջնջիչ շտրիխ ժապավենաձև 4,2մմ x 8մ: 'RETYPE'կամ համարժեք:	հատ	200	8000	40		40	
86	30192160/507	Ջնջիչ 3	Yalong Stationery Co., Ltd	Ջնջիչ շտրիխ գրիչատիպ 12 մլ: 'Flamingo' կամ համարժեք:	հատ	140	16100	115		115	
87	30192160/508	Ջնջիչ 4	Yalong Stationery Co., Ltd	Ջնջիչ շտրիխ գրիչատիպ 8մլ: 'Flamingo' կամ համարժեք:	հատ	120	7200	60		60	

88	30192231/501	Սկոչ 1	Սկառլե տ ՍՊԸ	Սկոչ՝ 19մմ x 16մ չափսերի, թափանցիկ: BAT՝ կամ համարժեք:	հատ	59.99	4739	79		79	
89	30192231/502	Սկոչ 2	Սկառլե տ ՍՊԸ	Սկոչ, թափանցիկ, փաթեթավորման համար, հաստությունը 40 մկմ, լայնքը 48 մմ , երկարությունը 200մ: Թափանցելիությունը 78%-ից ոչ պակաս: <Dolfin> համարժեք:	հատ	220	19800	90		90	
92	39263520/503	Սեղմակ 3	Deli LTD	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 25 մմ, արդյունավետ ամրեցնում է 60-90 թերթ: Տուփում 12h ՝Cosmic՝կամ համարժեք:	հատ	12	21600	1800		1800	
93	39263531/502	Սեղմակ 4	Deli LTD	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 32 մմ,արդյունավետ ամրեցնում է 90-120 թերթ: Տուփում 12h ՝Cosmic՝կամ համարժեք:	հատ	13	15600	1200		1200	
94	39263521/501	Սեղմակ 5	Deli LTD	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 41 մմ, արդյունավետ ամրեցնում է 120-150 թերթ: Տուփում 12h ՝Cosmic՝կամ համարժեք:	հատ	21	37800	1800		1800	
95	39263530/504	Սեղմակ 6	Deli LTD	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 51 մմ, արդյունավետ ամրեցնում է 150-200 թերթ: Տուփում 12h ՝Cosmic՝կամ համարժեք:	հատ	35	42000	1200		1200	
96	30192710/501	Սոսինձ չոր	Guangbo LTD	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ),կպչունության բարձր ցուցանիշով, գելային (ոսկային) հիմքով, առանց հոտի, կափարիչով, չափածրարված ոչ պակաս 35 գր զանգվածով, թուղթ սոսնձելու համար: <Flamingo> կամ համարժեք	հատ	150	27600	184		184	
97	24911200/502	Սոսինձ հեղուկ 1	Hatber LTD	Սոսինձ հեղուկ Էմուլսիա, 225 գր:ՊՎԱ-Մ՝ կամ համարժեքը:	կգ	660	11880	18		18	
98	24911300/502	Սոսինձ հեղուկ 2	Deli LTD	Հեղուկ սոսինձ, չափագրված 115 մլ: ՝Liquid glue՝կամ համարժեք:	կգ	800	9200	11.5		11.5	

99	22811130/502	Տետր	Սկառլե տ ՍՊԸ	Ընդհանուր տետր գծավոր և (կամ) քառակուսի լուսանցքով՝ Օֆսեթային թղթից, թերթերի քանակը 96թ, չափսերը 148x210 մմ: 'SKARLET'կամ համարժեք:	հատ	199.97	5999	30		30	
101	39292510/502	Քանոն 2	Deli LTD	Բռնակով ուղիղ քանոն գծաբաժանումներով, երկարությունը 30սմ, պլաստմասե նյութից,պլաստիկ թափանցիկ և երկողմանի նշված չափումներով : 'Maped' կամ համարժեք:	հատ	130	7670	59		59	
102	30199792/503	Օրացույց 1	Կոունկ տպարան ՍՊԸ	օրացույց նշումների համար, ոչ պակաս, քան 29x14 սմ չափերի, գունավոր տպագրությամբ, թերթերը միմյանց ամրացվում են զսպանակով, 2019թ.	հատ	700	16100	23		23	
103	30199792/504	Օրացույց 2	Կոունկ տպարան ՍՊԸ	Օրացույց պատի եռամյակային, շարժական օրանիշով, 2019թ:	հատ	1000	24000	24		24	
104	30197231/504	Ֆայլ 1	Darkblu	Ֆայլ, պոլիպրոպիլենային նյութից A4 ֆորմատի, 60 միկրոն, թափանցիկ, փայլուն: <Durable>, <Atlas> կամ համարժեք:	հատ	7.30	91250	12500		12500	
105	30197231/503	Ֆայլ2	Darkblu	Ֆայլ, պոլիպրոպիլենային նյութից A4 ֆորմատի, 80 միկրոն, թափանցիկ, փայլուն: <Durable>, <Atlas> կամ համարժեք:	հատ	10	140000	14000		14000	

ԳՆՈՐԴ

ՀՀ Լոռու մարզ Վանաձորի
համայնքապետարան
ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք
ՀՎՀՀ՝
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ /լրացնել/
Համայնքի ղեկավար

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

,,Ֆանտաստիկ,,ՍՊԸ
ք.Վանաձոր Տիգրան մեծի 38/1
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ 16093015357400
ՀՎՀՀ 06946424

Տնօրեն ..... Ա.Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N2
« 14 »փետրվարի 2020 թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-20/2-Ֆ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30234640/504	Հիշողության կրիչ 1													52200
2	30192133/503	Սրիչ													2600
3	44521230/502	Ամրակ1													8400
4	44521230/503	Ամրակ2													52200
5	30192128/501	Գրիչ 1													39615
6	30192121/505	Գրիչ 2													13920
7	30192121/507	Գրիչ 3													11000
9	39263600/501	Գրչաման													7800
10	39263200/501	Գրառումների գիրք 1													80000
11	39263200/502	Գրառումների գիրք 2													49400
12	30197333/501	Դակիչ1													12600
13	30197332/502	Դակիչ 2													30400
14	39241141/503	Դանակ 1													3900
15	39241141/504	Դանակ 2													1800
16	42961280/501	Դիսպենսեր													4500
17	30192720/501	Ընդգծիչ 1													14400
18	30192720/502	Ընդգծիչ 2													17050

20	30192741/501	Գունավոր տպագրության թուղթ1													14880
21	30192741/502	Գունավոր տպագրության թուղթ2													16800
22	30197622/503	Թուղթ 1													3112365
23	30197622/502	Թուղթ 2													120330
24	30199130/502	Թուղթ 3													8850
25	30194320/502	Թուղթ 4													73080
26	30197623/503	Թուղթ 5													7200
27	30197623/504	Թուղթ 6													12500
28	30197230/512	Թղթապանակ 1													25200
29	30197232/502	Թղթապանակ 2													32000
30	22851100/501	Թղթապանակ 3													25500
31	22851200/509	Թղթապանակ 4													79600
32	22851200/510	Թղթապանակ 5													9000
33	22851200/502	Թղթապանակ 6													47405
34	22851200/503	Թղթապանակ 7													67410
35	22851200/501	Թղթապանակ 8													47200
36	22851200/504	Թղթապանակ 9													21600
37	22851200/506	Թղթապանակ 10													97900
38	22851200/507	Թղթապանակ 11													35800
39	22851200/508	Թղթապանակ 12													20625
40	22851200/505	Թղթապանակ 13													55200
44	35821400/504	ՀՀ ազգային դրոշ 2													10000
46	39263100/506	Լրակազմ 2													24500
47	39263100/504	Լրակազմ 3													40000
48	30199230/503	Ծրար 1													20400
49	30199230/502	Ծրար 2													217700
50	30199232/501	Ծրար 3													30000
51	30197322/503	Կարիչ 1													10500
53	30197322/502	Կարիչ 3													15000

54	30197323/503	Կարիչ 4													11000
55	30197111/502	Կարիչի ասեղ 1													4160
56	30197112/502	Կարիչի ասեղ 2													8460
57	30197100/503	Կարիչի ասեղ 3													15400
58	30197100/504	Կարիչի ասեղ 4													5950
59	30197120/503	Կոճզամ 1													1080
60	30197120/504	Կոճզամ 2													6440
61	30192155/501	Կնիքի սարք													3000
62	30141200/505	Հաշվիչ մեքենա 1													20000
63	30192130/505	Մատիտ 1													12480
64	30192130/506	Մատիտ 2													10400
65	30192130/507	Մատիտ 3													5600
66	30192130/508	Մատիտ 4													5600
67	30192135/503	Միջուկ 1													1000
68	30192135/504	Միջուկ 2													1500
69	39241210/505	Մկրատ 1													7000
70	39241210/506	Մկրատ 2													4000
71	39241210/504	Մկրատ 3													4500
72	22811150/505	Նոթատետր 1													11000
73	22811150/508	Նոթատետր 2													9500
74	22811150/507	Նոթատետր 3													58500
75	22811150/506	Նոթատետր 4													69000
76	30199420/504	Նշումների թուղթ կպչուն 1													9604
77	30199420/505	Նշումների թուղթ կպչուն 2													14000
80	30199430/506	Նշումների թուղթ 2													31600
82	30192111/501	Շտամպի բարձիկ													9240
84	30192160/505	Ջնջիչ 1													9600
85	30192160/506	Ջնջիչ 2													8000
86	30192160/507	Ջնջիչ 3													16100
87	30192160/508	Ջնջիչ 4													7200

88	30192231/501	Սկոչ 1													4739
89	30192231/502	Սկոչ 2													19800
92	39263520/503	Սեղմակ 3													21600
93	39263531/502	Սեղմակ 4													15600
94	39263521/501	Սեղմակ 5													37800
95	39263530/504	Սեղմակ 6													42000
96	30192710/501	Սոսինձ չոր													27600
97	24911200/502	Սոսինձ հեղուկ 1													11880
98	24911300/502	Սոսինձ հեղուկ 2													9200
99	22811130/502	Տետր													5999
101	39292510/502	Քանոն 2													7670
102	30199792/503	Օրացույց 1													16100
103	30199792/504	Օրացույց 2													24000
104	30197231/504	Ֆայլ 1													91250
105	30197231/503	Ֆայլ2													140000

ԳՆՈՐԴ

ՀՀ Լոռու մարզ Վանաձորի
համայնքապետարան
ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք
ՀՎՀՀ՝
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ /լրացնել/
Համայնքի ղեկավար

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

„Ֆանտաստիկ„ՍՊԸ
ք.Վանաձոր Տիգրան մեծի 38/1
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ 16093015357400
ՀՎՀՀ 06946424

Տնօրեն ..... Ա.Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն